Թիվ 14454879 կատարողական վարույթով գնային առաջարկ

2026-11-17 14:54:42

Հայտատու	Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	«Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքի 77 հոդվածի 4-րդ մաս

Արբիտրաժային դատարանի կողմից տրված թիվ 03-017/290825 կատարողական թերթի համաձայն պետք է Ներսես Գրիգորի Ֆահրադյանից համապարտության կարգով հօգուտ «Նորման Կրեդիտ» ՈՒՎԿ ՓՀ-ի բռնագանձել 1.386.680 ՀՀ դրամ, հաշվեգրվող տոկոսներ, ինչպես նաև սահմանված կատարողական ծախս:
Վերը նշվածի հիման վրա Հարկադիր կատարումն ապահովող ծառայության /այսուհետ Ծառայություն/ Արմավիրի մարզային բաժնում հարուցվել է թիվ 14454879 կատարողական վարույթը, որի շրջանակներում արգելանք է կիրառվել Ներսես Գրիգորի Ֆահրադյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Արմավիրի մարզ, Մեծամոր համայնքի, Տանձուտ գյուղում գտնվող՝ սեփականության իրավունքի վկայականներ թիվ 0319855, թիվ 0316520 անշարժ գույքերի վրա:
«Կատարողական վարույթի մասին» օրենքի 77 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Անշարժ գույքի շուկայական արժեքը որոշելու նպատակով հարկադիր կատարողը նշանակում է փորձագետ, եթե՝
(...)
2) այդ մասին մինչև գույքի հարկադիր իրացման որոշում կայացնելը միջնորդել է կատարողական վարույթի մասնակիցը՝ պայմանով, որ փորձաքննությունը կկատարվի միջնորդություն ներկայացրած անձի հաշվին, և եթե վերջինս անհրաժեշտ ծախսերի գումարը հարկադիր կատարողի նշած չափով նախապես վճարում է Ծառայության Արմավիրի մարզային բաժնի թիվ 900333829019 դեպոզիտ հաշվին:
Որպես տվյալ գույքի սեփականության մասնակիցներ՝ տեղեկացնում ենք Ձեզ, որ սույն ծանուցումը հանձնվելու հաջորդ օրվանից 2 շաբաթվա ընթացքում իրավունք ունեք միջնորդություն ներկայացնել հարկադիր կատարողին՝ գույքի շուկայական արժեքը պարզելու նպատակով փորձաքննություն նշանակելու համար՝ պայմանով, որ փորձաքննությունը կկատարվի միջնորդություն ներկայացրած անձի հաշվին, և եթե անհրաժեշտ ծախսերի գումարը հարկադիր կատարողի նշած չափով նախապես վճարեք Ծառայության Արմավիրի մարզային բաժնի թիվ 900333829019 դեպոզիտ հաշվին:

Նշված ժամկետում միջնորդության բացակայության պարագայում, ՀՀ Արմավիրի մարզի, Մեծամոր համայնքի, Տանձուտ գյուղում գտնվող, /սեփականության իրավունքի վկայական թիվ 0316520/ անշարժ գույքից պարտապան Ներսես Գրիգորի Ֆահրադյանին պատկանող 1400 քմ կազմող 1/5-րդ բաժինը հարկադիր աճուրդի է ներկայացվելու կադաստրային արժեքի (2.131.500 ՀՀ դրամի, որի 1/5-րդ բաժնի արժեքը կազմում է 426.300 ՀՀ դրամ) 80%-ի չափով, որը կազմում է 341.040 ՀՀ դրամ իսկ ՀՀ Արմավիրի մարզի, Մեծամոր համայնքի, Տանձուտ գյուղում գտնվող, /սեփականության իրավունքի վկայական թիվ 0319855/ անշարժ գույքը հարկադիր աճուրդի է ներկայացվելու կադաստրային արժեքի (1.108.800 ՀՀ դրամի) 80%-ի չափով, որը կազմում է 887.040 ՀՀ դրամ։

14454879.pdf

37460713514

armavir@harkadir.am

ԱՋԱՓՆՅԱԿ ՀԱԼԱԲՅԱՆ Փ. 41Ա